

ՅՈՒՐԵԼԵԱՆ = 20

Գևորգ վարդապետ Մարոյեան
Գևորգ Մարոյեան

ԶՕՆ ԴՊՐԱՆՈՅԻՆ ՎԱԶԳԷՆԵԱՆ

Զդպրութիւն ազգային,~
զինուորութիւն երկնային,~
Յուդիդ հաւատ հարց սրբոց
եւ յաւիտեան օրհնելոց.
Պահեմք անխախտ, անսասան
ի փառս երկրին Հայաստան:

Կոչեն ի մարտ հարքն մեզ`
օ՛ն անդր յառաջ, յասպարէզ
Եկեղեցի, Ազգ եւ Հող
մէկ Հայրենիք` յաւերժող
Եւ դպրութեամբ ազգային
լինիմք զինուոր երկնային:

Հիմնեալ տեսեամբ Գարեգնի`
խոհեմացեալ քաջ Հովուի,
Զգեցեալք զսէր Քրիստոսի
ի զէն բարի գուպարի
Մնամք անխախտ անսասան
ի փառս երկրին Հայաստան:

Տաճար լուսոյ դպրանոց,
օրրան հոգւոց տղայոց
Յանուն Տեառն Վազգէնայ
յանառ կղզւոջ Սեւանայ,
Քոյդ կրթութեամբ ազգային
լինիմք զինուոր երկնային: